



Երևանի հիմնադրման պատմության «Էրեբունի» թանգարանը ստեղծվել է ՀՀ Կառավարության 1968 թ. մայիսի 24-ի թիվ 225 որոշմամբ, որի համար գիտական հիմք են հանդիսացել Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող նշանավոր 3 հնավայրերից՝ Արին բերդից, Կարմիր բլուրից և Շենգավիթից հայտնաբերված գտածոները: Հանրության առջև թանգարանն իր դռները բացել է 1968թ. հոկտեմբերի 19-ին՝ ի նշանավորումն Երևան քաղաքի 2750-րդ տարեդարձի: Այնուհետև ՀՀ Կառավարության 2003թ. մարտի 7-ի N 313-Ն որոշմամբ վերանվանվելով որպես պատմահնագիտական արգելոց-թանգարան՝ Էրեբունին այսօր գործում է «Կարմիր բլուր» և «Շենգավիթ» մասնաձյուղերով՝ հանդիսանալով հանրության համար այցելելի միակ հնագիտական արգելոց-թանգարանը Երևան քաղաքում և կարևոր ուրարտագիտական կենտրոն տարածաշրջանում:

Թանգարանի շենքը կրկնում է ուրարտական պալատական կառույցների հորինվածքը՝ պահպանելով արտաքին խուլ պատերով ու երդիկավոր հարթ կտուրներով ներքին բակի շուրջ ամփոփված ժողովրդական բնակելի տան տրամաբանական սկզբունքը: 1970թ. շենքի նախագիծն արժանացել է ԽՍՀՄ Ճարտարապետների միության դիպլոմի: Հեղինակներն են ճարտարապետներ Շմավոն Ազատյանն ու Բաղդասար Արզումանյանը, քանդակագործը՝ ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Արա Հարությունյանը:

Թանգարանի 1-ին գիտական ցուցադրությունը (հեղինակ՝ պատմ. գիտ. դոկտոր Լավրենտի Բարսեղյան) գործել է մինչև 1982թ. : 1982-ից մինչ օրս գործող գիտական ցուցադրության հեղինակը պատմ. գիտ. դոկտոր Ստեփան Եսայանն է:

Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հազարավոր քաղաքացիներ և օտարերկրյա զբոսաշրջիկներ այցելում են թանգարան՝ իրենց ստացած տպավորությունների մասին գրառումներ թողնելով թանգարանի հուշամատյանում: Միայն 2009թ. թանգարանն ունեցել է 17 200 այցելու:

□□□□□□□□ □□□□□□□□

- Սուրեն Նարիմանյան - 1968-1980թթ., 1988-1989թթ.
- Սիմոն Հնայակյան – 1980-1981թթ.
- Արմեն Ղարազյոզյան – 1981-1982թթ.
- Աշոտ Փիլիպոսյան – 1982-1988թթ., 2007-2009թթ.
- Գագիկ Սարգսյան – 1988թ.
- Սուրեն Մալխասյան – 1989-2007թթ.
- Գագիկ Գյուրջյան – 2009թ. սեպտեմբերի 25-ից

